

Աստղիկ Ա. Բարաջանյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԱԶՈՎ ԽԱԶ-ՄԱՍՈՒՆ-ՔԱՐԱՆ*

Մուտք

Քրիստոնեական մասունքների, մասնավորապես մասնատուփերի գիտական ուսումնասիրությամբ զբաղվել են ոչ միայն աստվածաբանները, այլև արվեստաբանները, գրականագետները, պատմաբանները (Ա.Գրաբար¹, Պ.Բրաուն², Պ.Գիրի³, Մ.Գոթիե⁴, Հ.Բելթինգ⁵ և ուրիշներ):

20-րդ դարից սկսած՝ մասունքների նկատմամբ մեծացող հետաքրքրության վառ արտահայտությունը վերջին տասնամյակներում կազմակերպված ցուցահանդեսներն էին, որոնցում ներկայացվում էին հիմնականում Արևմտյան, մասամբ էլ Արևելյան Եվրոպայի, ԱՄՆ-ի թանգարաններում ու տաճարների խորաններում պահվող բազմաթիվ թանկարժեք մասունքաբաններ: Հայաստանը ևս անմասն չմնաց այդ միջոցառումներից: Մի քանի ցուցահանդեսների շարքում⁶ մեծ նշանակություն ունեցավ 2007 թ. Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության տարվա մշակութային միջոցառումների շրջանակում Լուվրում բացված «Armenia Sacra» ցուցահանդեսը: Այստեղ ներկայացվեցին Հայաստանի պատմական ու մշակութային հարստությունները, այդ թվում և քրիստոնեական մասունքներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի պատմության թանգարանի և Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության հավաքածուներից:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 2.12.2013:

1 Տնն **Grabar A.**, Martyrium. Recherches sur la culte des reliques et l'art chrétiens antique, Paris, 1946.

2 Տնն **Brown P.**, The cult of the Saints: Its raise and function in Latin Christianity, Chicago, 1981.

3 Տնն **Geary P.**, Furta Sacra: Thefts of relics in the central Middle Ages, Princeton, 1978.

4 Տնն **Gautier M.**, Les routes de la Foi: Reliques et reliquaries de Jérusalem à Compostelle, Fribourg, 1983.

5 Տնն **Belting H.**, Bild und Kult: Eine Geschichte des Bildes vor dem Zeitalter der Kunst, München, 1990.

6 Տնն **Ornamenta ecclesiae**», Բյուլն, 1985 թ., «Le corps en morceaux», Օրսեյ թանգարան, Փարիզ, 1990 թ., «The glory of Byzantium», Մետրոպոլիտեն թանգարան, Նյու-Յորք, 1997 թ., «Byzanz. Die Macht der Bilder», Հիլդեսհեյմ, 1998 թ., «Христианские реликвии в Московском Кремле», Մոսկվա, 2000 թ., «Il Volti di Cristo», Հռոմ, 2000-2001 թթ., «Le tresor de la Sainte-Chapelle» Լուվր, Փարիզ, 2001 թ. և այլն: Տնն նաև՝ **Бакалова Е.**, Реликвии у истоков культа святых, Восточнохристианские реликвии, ред.-сост. Лидов А., Москва, 2003, с. 19-20.

1. Քրիստոնեական մասունքների պաշտամունքը և դրանց ամփոփումը շարժական մասնատուփերում

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են մասունքների մի քանի խմբեր՝ **քրիստոնեական, ազգային, ընտանեկան, անձնական**: Քրիստոնեական մասունքները (մասունք սրբոց, սրբություններ, նշխարք, փշրանք, փշուրք) հանուն նոր հավատի նահատակված և սրբացված անձանց մարմնավոր մնացորդներն են կամ նրանց հետ առնչվող առարկաները, որոնք մեծ հարգ ունեն և օժտված են հրաշագործ զորությամբ: «Եւ Աստուած նշանաւոր զօրութիւններ էր անում Պօղոսի ձեռովը: Մինչև որ նորա մարմնի վերայից թաշկինակներ և վարշամակներ տանում էին դնում հիւանդների վերայ և ցաւերը հեռանում էին նորանցից, և չար ոգիները դուրս էին գալիս» (Գործք Առաքելոց 19:11-12):

Առաջին դարի քրիստոնյաները, ենթարկվելով կրոնական հալածանքների, ժողովվում էին կատակոմքներում՝ «կարդալու Սուրբ գրքերն ու սաղմոսներ երգելու նահատակված սրբերի պատվին»⁷: Մասունքների պաշտամունքը ևս գաղտնի էր, քանի որ դրանց պահպանությունը թուլաբերելի էր միայն սրբերի նահատակման վայրերում և Հռոմի կատակոմքներում: Մասունքների տեղափոխումը քաղաքի դարպասներից ներս խստիվ արգելված էր: Իրավիճակը փոխվում է 4-րդ դարում, երբ քրիստոնեական մասունքների պաշտամունքը սկսում է ազատ դրսևորվել՝ նոր կրոնի օրինականացումից անմիջապես հետո և մեծ թափ է առնում եկեղեցաշինությունը: Դա իր արտահայտությունն է գտնում հատկապես հանուն հավատի նահատակվածների սպանության վայրերում սրբարան-վկայարանների կառուցմամբ:

Հայաստանում ևս քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվելուց հետո առաջին նահատակների մասունքները սրբագործվեցին և հայոց եկեղեցական ծիսակարգում հատուկ կարգավիճակ ստացան: Մարտիրոսների մասունքները հավաքելու և նահատակների սպանության վայրերում դրանք ամփոփելու գործին ձեռնամուխ եղավ Գրիգոր Լուսավորիչն անձամբ՝ Խոր Վիրապից դուրս գալուց անմիջապես հետո. «Եւ իբրև ոչ ումեք ինչ գեկուցեալ վասն երանելի կանանցն որք պսակեցան՝ զՀռիփսիմէն ասեմ՝ և գնորին ընկերացն, ինքն իսկ ՚ի խոր վիրապին մարգարէական ակամբն տեսանէր զնահատակութիւն երանելի վկայիցն Քրիստոսի և ասէ. «Ու՛ր են նշխարք սրբոցն». և մարդիկն զարմացեալ ասէին՝ «Ջոր սրբոցն ասէ». և իբրև լուան ՚ի նմանէ զանուանս պսակելոցն, ապա ՚ի միտ առեալ՝ ցուցին զպատուական և զամենասուրբ նշխարս ոսկերացն: Եւ առեալ Գրիգորի պատէր իւրեանց իսկ պատառոտուն հանդերձիքն՝ չարարեալ ուրուք ինչ արժանի յերանելեաց մերձեցուցանել ՚ի մարմնս, մինչև սրբեալք ելանէին յաւազանէն փրկութեան. և դնէր ՚ի հանգստարանի ՚ի տեղուցն, յորում պսակեցան սուրբքն»⁸:

7 Sicut Apostольские постановления (через Климента, епископа и гражданина Римского), кн. 6:30, Казань, 1864.

8 Մովսեսի Կաղանկատուացոյ պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ

Միջնադարում մասունքները մեծ նշանակություն ունեին հասարակության համախմբման, պետական-քաղաքական աշխարհայացքի ձևավորման գործում, և իհարկե, հոգևոր կյանքում⁹: Դրա վառ օրինակն էր Բյուզանդիան: Կայսրության կազմավորման սկզբնական շրջանում փոքրիկ Բյուզանդիոնը, վերածվելով Արևելահռոմեական կայսրության քաղաքական ու վարչական կենտրոնի, աստիճանաբար սկսեց ձևավորվել իբրև «սուրբ քաղաք»: Կառուցվեցին բազմաթիվ տաճարներ՝ ուխտավորների հոծ խմբերը դեպի այդ քաղաքն ուղղելու համար: Այս գործընթացում Կոստանդին Մեծն (306–337) առաջին հերթին Կոստանդնուպոլսում է հավաքում Սուրբ Երկրից բերված մասունքները՝ մայրաքաղաքը նմանեցնելով Նոր Երուսաղեմին՝ Փրկչի Երկրորդ Գալստյան համար ընտրված քաղաքին: Արդյունքում, Կոստանդնուպոլիսը վերածվում է հսկա «քրիստոնեության թանգարանի», որտեղ հավաքվում է մասունքների հարուստ մի ժողովածու՝ սկսած հին կտակարանային մարգարեններից մինչև առաջին դարի մարտիրոսները¹⁰:

Մասունքները քրիստոնեական մշակութային ժառանգության կարևոր մասն են կազմում: Դրանք պատվելու ավանդույթը և պաշտամունքը մեծ ազդեցություն ունեցան քրիստոնեական ծեսերի և արարողակարգի ձևավորման գործում: Վաղ քրիստոնեական երկրներում սկսվում է մասունքների տեղափոխման գործընթացը, ինչի շնորհիվ սրբերի գերեզմանները քաղաքներ են փոխադրվում: Մասունքների տեղափոխումը սրբազան նշանակություն ունեւր քրիստոնեական աշխարհայացքի տեսանկյունից, որով նշանավորվում էր սրբության տարածումը և բարձրացվում այն տաճարի կարգավիճակը, որտեղ պահվում էր մասունքը:

Մասունքների պաշտամունքի վերաբերյալ առաջին պաշտոնական որոշումը կայացնում է Կարթագենի եկեղեցական ժողովը (393–419), ըստ որի՝ սրբարաններ կարող էին կառուցվել միայն նահատակման վայրում կամ մասունքների մնացորդների վրա: Այդ իսկ պատճառով առաջ է գալիս «երկրորդական մասունքների» գաղափարը: Դրանք այն իրերն էին, որոնք սերտորեն կապվում էին մասունքների հետ (հագուստ, պատանք, չարչարանքի գործիք և այլն)¹¹:

Քրիստոնյաների հալածանքներին հաջորդող շրջանում սրբերի մասունքների պաշտամունքը արագորեն տարածվեց թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում: Էական էր մասունքի դերը հատկապես տվյալ սրբի պաշտամունքի ձևավորման և տարածման գործում, ինչպես վաղ շրջանում, այնպես էլ հետագայում: Սրբի պաշտամունքի ծագումն ու ընդլայնումը սկսվում էր վերջինիս նահատակության տեղում կամ նրա մասունքները ձեռք բերելու ու պահպանելու վայրում¹², որով «**սուրբերու կեանքը անոնց մահէն և նահատակութենէն յետոյ կը շարունակուի իրենց**

Էմին, Մոսկվա, 1860, գլ. ԺԳ, էջ 27:

9 Տե՛ս **Лидов А.**, Реликвии как стержень восточнохристианской культуры, Восточнохристианские реликвии, ред.-сост. Лидов А., Москва, 2003, с. 5–6.


10 Տե՛ս **Беляев Л. А.**, Христианские древности, С. Петербург, 2000, с. 269–270.

11 Տե՛ս **Беляев Л. А.**, ук. соч., с. 270.

12 Տե՛ս **Бакалова Е.**, ук. соч., с. 32.


հրաշագործ մասունքներով»¹³:

4-րդ դարից լայն տարածում գտավ սրբացված անձանց նահատակման վայրերում կամ նրանց մասունքների վրա վկայարանների, այնուհետև միևնույն սրբի անունով եկեղեցիների կառուցումը¹⁴: Առաջին հերթին կարևորվում էր մասունքի դերը տաճարի սրբազան տարածության կազմակերպման գործում: Հենց այդ տարածությունն էլ իմաստավորվեց որպես մոնումենտալ մասունքարան¹⁵: Այդ պատճառով սկզբնական շրջանում մասունքները շարժական մասնատուփերի մեջ պահելու անհրաժեշտություն չկար. «Հին դարերու մեջ սրբոց նշխարները միմիայն գերեզմանի դիրքի մեջ կը պատուուէին, և եթէ տեղափոխուէին ու բաշխուէին ալ, նորէն գերեզմանի ձևի կը վերածուէին, և սովորութիւն չէր մասնատուփերու կամ որևէ շարժական ձևի ներքև պահել սրբոց ուկորները»¹⁶: Հետագայում դրանց դերն այնքան մեծացավ, որ մասունքների պահպանության համար ստեղծվեցին ազնիվ մետաղներից պատրաստված մասնատուփեր ու տապանակներ՝ զարդարված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Դրանց ձևերն ու պատկերները դարձան պատկերագրության գլխավոր աղբյուր¹⁷:



ա. ք.

Նկ. 1. Հովհաննես Մկրտչի աջով խաչ-մասունքարան



ՄՇԱԿՈՒՅԹ

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Հայ առաքելական եկեղեցին ևս որդեգրեց մասունքները մասնատուփերի (նշխարաման, հաղորդատուփ, սրբատուփ) մեջ պահելու ավանդույթը, որի նախնական ձևը մարմնի որևէ մասի (աջ, ցուցամատ և այլն) նմանողությամբ պատրաստված տուփերն էին: Ամենատարածվածը Աջի տեսքով մասունքարաններն էին, որոնք ներկայացվում էին օրհնության

13 Մ. Արք. Աշճեան, Արագահաս Սուրբ Մարգիս, Եր., 2002, էջ 54:
 14 Տնն Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002, էջ 690-691:
 15 Տնն Лядов А., ук. соч., с. 9.
 16 Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. Ա., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 97:
 17 Տնն Беляев Л. А., նշվ. աշխ., էջ 271:

ժեստով՝ մատնեմատն ու բթամատը միացրած, խորհրդանշելով Սուրբ Երրորդությունն ու հավիտենական տիեզերքը: Աջերը պատրաստվում էին բազլի տեսքով, երբեմն էլ մինչև դաստակը՝ կիրառելով դրվագման, զուգաթելի հնարներ, ընդելուզելով թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Գրանց վրա պատկերում էին տերունական տեսարաններ (Նկ. 2):



Նկ. 2. Գրիգոր Լուսավորչի Աջը, 1657 թ. գ. Քանաքեռ, 1698 թ.

Իբրև մասնատուփ կարող էին ծառայել խաչերը (Նկ. 4, 5), պարզ տուփի ձևով մասունքարանները, բարդ համադրություններով պատրաստված մասնատուփ-պահարանները (Նկ. 6, 7):

Հայկական եկեղեցական արարողակարգում, հատկապես պատարագների ժամանակ առավել գործածական էին խաչերը, որոնք տարբերակվում են սեղանի, խորանի, թափորի, ձեռաց, ճաճանչախաչեր և, իհարկե, մասնատուփ-խաչեր: Մասնատուփ-խաչերը բազմաձև ու բազմատեսակ են՝ պատրաստված արծաթից, երբեմն ոսկեզօծված, կատարված տեխնիկական տարբեր հնարների կիրառմամբ (ձուլում, դրվագում, զուգաթել, հատիկազարդում, արծնապատում), ընդելուզված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով (ռուբին, զմրուխտ, մարգարիտ, ծիրանաքար, նոնաքար, փիրուզ, սարդիոն, մարջան, ապակի և այլն):

Արարողական սպասքում, իբրև հայ եկեղեցու մասունքների գեոտեղարան, իրենց ուրույն տեղն են զբաղեցնում մասանց պահարանները, որոնք պատրաստվում էին փայտից, պատվում մետաղե թիթեղների վրա դրվագազարդ պատկերներով, զարդարվում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Գրանք հիմնականում եռափեղկ են, որոնցից երկուսը կատարում են դռնակների դեր և հիմնատախտակին ամրանում են ծխնիներով: Պահարանների մակերեսին պատկերվում էին ավետարանական տեսարաններ, սրբերի վարքից դրվագներ, Հայաստանում քրիստոնեություն տարածած կերպարներ և նույնիսկ աշխարհիկ անձինք, որոնք մասնատուփերի պատվիրատուներն էին: Մասանց պահարաններին առավել կարևորություն ու շուք հաղորդելու համար դրանք պատրաստում էին արծաթից կամ ոսկուց:

Գեղարվեստական մետաղամշակությունը Հայաստանում հայտնի էր տակավին հնագույն ժամանակներից: Միջնադարում մետաղի գեղարվեստական մշակումն առանձնանում է մետաղագործությունից՝ բարձրանալով արվեստի աստիճանի: Այն կարևոր տեղ է զբաղեցնում քրիստոնեական արվեստում և նյութական մշակույթում: Հայկական խոշոր քարաքանդակում ձևավորվում են արհեստագործական, մասնավորապես՝ ոս-

կերչական-արծաթագործական կենտրոններ, որոնցից աչքի են ընկնում Դվինը, Անին, Արծնը, Կարինը, Վանը, ապա Երզնկան, Բաղեշը, Կեսարիան, Սեբաստիան, Ադանան, ավելի ուշ՝ Թավրիզը, Ագուլիսը, Նոր Զուղան, Թոքատը, Ադրիանուպոլիսը և այլն: Բացի այս քաղաքներից, խոշոր վանքերում նույնպես մետաղագործական գործատներ-արհեստանոցներ են ստեղծվում՝ բավարարելու ներքին և արտաքին պահանջները: Այս բոլոր կենտրոնները մեծ դեր էին կատարում դարաշրջանին բնորոշ գաղափարների, ձևաբանական կերտվածքի ու ոճական առանձնահատկությունների ձևավորման առումով՝ պահպանելով դարավոր ավանդույթներն ու փորձը, հարստացնելով դրանք նոր ձեռքբերումներով: Հայ ոսկերիչ, արծաթագործ վարպետները կերտում էին աշխարհիկ գործածության և եկեղեցական արարողական սպասք՝ ժամանակի թելադրանքին ու ճաշակին զուգորդելով անհատական մոտեցումն ու ձեռագիրը:

ՄՇԱԿՈՒՅԹ

2. Հովհաննես Մկրտչի Աջով խաչ-մասունքարանը

Հայ կիրառական արվեստում իր ձևով եզակի է Հովհաննես Մկրտչի Աջով խաչ-մասունքարանը: Այն իր մեջ համակցում է Հայաստանում տարածված մասանց պահարանների բոլոր տեսակները. պահարանը՝ տապանակի տեսքով, խաչը, Աջը (Նկ. 1): Մասունքարանը¹⁸ պահվում է Սբ. Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյան գանձատան հատուկ պահոցում (N 259 (2615)): Ստեղծվել է 14-րդ դարում, Ադանայում՝ Կիլիկիայի հարուստ ու մարդաշատ քաղաքներից մեկում: Թե ինչպես է մասունքարանը Կիլիկիայից հասել Էջմիածին, տեղեկություններ չկան, միայն հայտնի է, որ 17-18-րդ դարերի գույքամատյանում այն արդեն գրանցված է եղել: Մասունքարանը 17-րդ դարում վերանորոգվել է, ըստ երևույթին, երբ արդեն Էջմիածնում էր:

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

Կիլիկիայում գեղարվեստական մետաղամշակությունը, ինչպես արվեստի մյուս ճյուղերը՝ ճարտարապետությունը, քանդակագործությունը և հատկապես մանրանկարչությունը, հիմք ունենալով ազգային ավանդույթները և օգտագործելով բյուզանդական, արևմտյան ու արևելյան արվեստների նվաճումները, զարգանում էր միանգամայն ինքնուրույն՝ ստեղծելով յուրահատուկ ոճ: Քաղաքային կյանքի աշխուժացումն այստեղ մեծապես կապված էր 12-րդ դարի վերջում կազմավորված Կիլիկիայի հայկական թագավորության հետ, որը գոյատևեց մինչև 14-րդ դարի վերջին քառորդը: Կիլիկիայի միջնադարյան քաղաքները (Միս, Տարսոն, Ադանա, Մամեստիա, Անարգարա, Այաս, Կոռիկոս և այլն) նշանակալից զարգացման հասան մի կողմից՝ պետության հովանավորության, մյուս կողմից՝ արհեստագործության, տարանցիկ առևտրի աշխուժացման շնորհիվ: Դրան նպաստում էր նաև Հայաստանի երբեմնի ծաղկուն ու զարգացած քաղաքների՝ Անիի, Կարսի, Վանի, Կարինի, Արծնի, Նախճավանի արհեստավորների զանգվածային գաղթը դեպի Կիլիկիա¹⁹:

Կիլիկյան տնտեսական, քաղաքական, մշակութային խոշոր կենտրոն-

ՎԷՄ համահայկական հանդես

18 Չափերը՝ բարձրությունը՝ 26.5 սմ, լայնությունը՝ 22 սմ, հաստությունը՝ 2 սմ:
19 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատ. 3, Եր., 1976, էջ 724-726:

ներից էր Ադանան (Ադան, Ադանահ, Ադանիա, Անտիոքիս առ Մարոսիվ, Ատան, Ատանա, Ատանա Կիրանոս, Բադնե, Մաքսիմիանոսյան Ադանա, Մարոսյան Անտիոքիս, Սեյհան²⁰), որն առաջին անգամ հիշատակում է Քսենոփոնը «Նահանջ բյուրաց»-ում: Այն Ք. ա. 3-2-րդ դդ. հելլենիստական մշակույթի հայտնի կենտրոն էր, որը Հռոմեական ժամանակաշրջանում (1-4-րդ դդ.) վերածվում է զորակայանի: 10-րդ դարի կեսերին Ադանան հայտնի վաճառաշահ քաղաք էր, որը 12-14-րդ դդ. նոր վերելք է ապրում՝ դառնալով հայ մշակույթի կարևոր օջախներից մեկը, որտեղ զարգանում են առևտուրն ու արհեստագործությունը, մասնավորապես արծաթագործությունը: 14-րդ դարի սկզբին Ադանան հիշատակվում է «**հոյակապ ու թագավորական քաղաք**»²¹, ուր հիմնվել է նաև արքունի պալատ: 14-րդ դարի կեսերից քաղաքը ասպատակության է ենթարկվում թուրքական մի քանի ցեղերի և Եգիպտոսի մամլուքների կողմից: 1575 թ. Ադանան վերջնականապես գրավում են օսմանյան թուրքերը:



Նկ. 3. Հովհաննու Աջը, 1760 թ.

Մշակութային խաչմերուկում կիլիկյան միջավայրում ստեղծված Հովհաննես Մկրտչի Աջով խաչ-մասունքարանը պատրաստված է արծաթից և ամբողջությամբ ոսկեզօծ է: Հովհաննես Մկրտչի մասունքով շատ խաչեր ու Աջեր կան Էջմիածնի Մայր տաճարի թանգարանի, Ալեք և Մարի

Մանուկյան գանձատան պահոցներում, որոնք բոլորն էլ պատրաստված են բարձրարժեք գեղարվեստական հորինվածքով և ուրույն ոճով (Նկ. 3, 4):

Քրիստոնեական աշխարհում բավականին լայն տարածում ունի Հովհաննես Մկրտչի պաշտամունքը²²: Հովհաննես Մկրտիչը քրիստոնեական կրոնի առաջնային կերպարներից մեկն է, որը կոչված էր մարդկանց

20 Տե՛ս <http://www.armeniapedia.org/wiki/Ադանա>:

21 Հայկական համառոտ հանրագիտարան, Եր., 1990, էջ 40-41:

22 Ըստ ավանդության՝ Հովհաննես Մկրտչի մարմինը քրիստոնյաները թաղում են Սեբաստիայում, որտեղից Դուկաս առաքյալը տեղափոխում է Կարապետի միայն աջ ձեռքը իր հայրենի Անտիոք քաղաքը: Աջը խնամքով պահպանվում է Անտիոքում մինչև Հուստինիանոս Ուրացողի ժամանակաշրջանը, որը ոչ միայն հալածում էր քրիստոնյաներին, այլև ավերում ու հրդեհում էր սրբերի մասունքներն ու քրիստոնեական տաճարները: Անտիոքում չկարողանալով գտնել Կարապետի Աջը (քանի որ քրիստոնյաները այն պահել էին քաղաքային Գոնիա կոչվող աշտարակում), Հուստինիանոսը հրամայում է ոչնչացնել Սեբաստիայում գտնվող մարմինը: Ըստ բյուզանդական պատմիչներ Նիկիֆորոսի և Կեղրենոսի՝ Հուստինիանոսի հրամանը իրագործվում է: Մակայն երանելի Սիմեոն Մետաֆրաստը վկայում է, որ հրդեհվել են Հովհաննես Մկրտչի մարմնի փոխարեն դրված ուրիշ մարդու ոսկորները: Անտիոքում Աջը պահպանվում է մինչև 10-րդ դար, որից հետո երկար դեգերելով, 1993 թ. հայտնաբերվում է Չեռնոգորիայի Ցետինյան վանքում, ուր և պահպանվում է մինչ այժմ: Աջը ներկայումս չունի երկու մատ. ձկույթը, որը պահվում է Մոսկովյի թանգարանում և մատնեմատը՝ Իտալիայի Մինեա քաղաքում: Հովհաննես Մկրտչի մասունքների և մասնավորապես Աջի գտնվելու վայրի հետ կապված՝ կան բազմաթիվ վարկածներ: Ուսումնասիրողների կողմից հաշվվել են 11 ցուցամատ, 12 գլուխ, 7 ծնոտ, 4 ուս, 9 ձեռք: Ներկայումս Աջի պահպանման ավանդական վայրն է համարվում Ցետինյան վանքը Չեռնոգորիայում, սակայն թուրքերը պնդում են, որ այն ծնոտի մի մասի հետ գտնվում է Թոփկապա պալատի թանգարանում, իսկ դպոհները պնդում են, որ այն Սուրբ Մակարիոս վանքում է: (http://ru.wikipedia.org/wiki/Десница_Иоанна_Крестителя):

նախապատրաստելու երկար սպասված Մեսիայի Գալստյանը. «**Ահա ես իմ հրեշտակն (այստեղ՝ պատգամաբեր, դեսպան, սուրհանդակ) ուղարկում եմ քո երեսի առաջից, որ պատրաստե՛ք քո ճանապարհը քո առաջին**» (Մարկոս 1:2): Քարոզչություն ծավալելով անապատում՝ նա հորդորում էր մարդկանց ապաշխարել, մկրտության խորհրդանշական արարողության միջոցով մաքրագործվել, քանզի «**մօտեցել է երկնքի թագաւորութիւնը**» (Մատթեոս 3:2): Քրիստոսին նախորդելու պատճառով նա ստացել է Կարապետ (Նախակարապետ, այսինքն՝ առաջնորդ) մակդիրը: Հովհաննես Մկրտչի գլխավոր առաքելությունը, սակայն, Հիսուսին մկրտելն էր. «**Ես ջրով եմ մկրտում ձեզ ապաշխարության համար: Բայց իմ ետևից եկողն ինձանից գօրաւոր է, որի կոշիկները վեր առնելու ես արժանի չեմ. նա ձեզ կ'մկրտէ Սուրբ Հոգով և կրակով**» (Մատթեոս 3:11): Քրիստոնեական կրոնում Հովհաննես Մկրտիչը հանդես է գալիս Բարեխոսի դերում՝ այդ առաքելության մեջ զիջելով միայն Աստվածամորը: Դա քրիստոնեական պատկերագրության մեջ իր արտահայտությունն է գտել ամենատարածված «Բարեխոսություն» (Դեհիսուս) թեմայում:

Հայաստանում ևս Հովհաննես Մկրտչի պաշտամունքը կարևոր տեղ է զբաղեցրել քրիստոնեությունը պետականորեն ընդունելուց ի վեր: Կեսարիայում եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալուց հետո Գրիգոր Լուսավորիչը, բազմաթիվ եկեղեցականների ուղեկցությամբ Մեքաստիայից Հայաստան վերադառնալիս, իր հետ բերում է Սուրբ Հովհաննես Մկրտչի ու Աթանագինե եպիսկոպոսի մատունքները՝ նախ ուղղվելով դեպի Տարոն գավառ, որ հեթանոսության հզոր կենտրոն էր: «**Ընդ որ յոյժ ուրախացեալ սքն Գրիգոր և եկեալ հասին ի գավառն Տարօնոյ և անդ շինեալ եկեղեցի յանուն սրբոյն կարապետին. ի տեղս մեհենիցն. և եդ անդ նշխարս ոսկերաց սք կարապետին. և սքն անտոն և կրօնիդէս մնացին ի տեղին ի սպասաւորութիւն սք կարապետին՝ իրեանց ընկերօքն՝ մեծաւ ձգնութիւն և խստամբեր վարութ. բազում նշանս և սքանչելիս կատարէր՝ ած ի ձեռանց ի հիվանդս և ի ցավագարս: Եվ յետ ի ամաց՝ լինելոյ նոցա անդ. փոխեցան ի քս ի վասն ինն ակնեայ. և թաղեցան ի տեղուջն փառաւորապէս**»²³:

Իննականեան Ս. Կարապետը դառնում է հայոց մեծ ուխտատեղի, որտեղ Գրիգոր Լուսավորիչն ամփոփում է Ս. Կարապետի և Ս. Աթանագինեի գլխավոր մատունքները՝ դրանք նախ զետեղելով «...քրտեայ (այսինքն՝

23 Յայտնավուրք, Կ. Պոլիս, 1706, էջ յսե-ծ:



Նկ. 4. խաչ՝ Հովհաննես Մկրտչի մատունքով, Արծկե, 1788 թ.



Նկ. 5. խաչ՝ Ս. Գևորգի մատունքով, Վան, 18-րդ դարի 2-րդ կես

ՄՇԱԿՈՒՅԹ

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես



Նկ. 6. Արագածի Ս. Նշան, Սաղմոսավան, 13-րդ



Նկ. 7. Նոյյան տապանի մատունքով պահարան, Քանաքեռ, 1698 թ.

կավե) կամ քարեայ առնաչափ տապաններու մեջ», ապա տապանները թաղում հողի մեջ, «... և Ս. Յովհաննէս Կարապետն ալ ընդունուեցաւ իբր Հայոց աշխարհին երկնաւոր պաշտպանը»²⁴:

Բացի այդ, Գրիգոր Լուսավորիչը շինում է Եղրդուտի Ս. Հովհաննէս, Մատնավանքի Ս. Կարապետ եկեղեցիները, որոնց մեջ ամփոփում է Հովհաննէս Մկրտչի և Աթանագինէ վկայի մատունքներից: Բազմամասնում հայոց հեթանոսական աստված Վանատուրի մեծիանի փոխարեն կառուցում է Հովհաննէս Մկրտչի վանքը, որտեղ զետեղվում են Ս. Կարապետի և Ս. Աթանագինէի մատունքների վերջին կտորները: Հեթանոսական ավանդույթներն արմատախիլ անելու և նոր կրոնը հաստատելու նպատակով Ս. Գրիգորը սահմանում է նաև Հովհաննէս Կարապետի տոնը, որը նշվում է նավասարդ ամսին²⁵: «Եւ գյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնտտեացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղուջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննէսու և սրբոյ վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեցեն»²⁶: Առհասարակ, Հայաստանում համաքրիստոնեական սրբերի շարքում Հովհաննէս Մկրտիչը ամենապատվելիներից մեկն է, որին նվիրված բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել²⁷ ու կառուցվում²⁸: Հով-

24 Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 97:

25 Տեն Հայոց եկեղեցու պատմություն, կազմ. Ա. Զամինյանը, Եր., 1991, էջ 44-45:

26 Ազգաթանգեղայ Պատմություն Հայոց, գլ. ՃԺԹ: 836, աշխատություն Գ. Տէր-Մկրտչեան և Մտ. Կանայեանց, Տիգրիս, 1909, էջ 435:

27 Մշո Ս. Կարապետ (Գլակա վանք, 4-րդ դ.), Մաստարայի Ս. Հովհաննէս (7-րդ դդ.), Միսիանի Ս. Հովհաննէս (6-7-րդ դդ.), Ավանի Ս. Հովհաննէս (591-610/611), Հռոմոսի Ս. Հովհաննէս (1038), Խծկոնքի Ս. Կարապետ (10-րդ դ.), Ցաղաց քարի Ս. Հովհաննէս (989) և Ս. Կարապետ (1041), Հովհաննավանք (1216-1221), Գանձասարի Ս. Հովհաննէս Մկրտիչ (1216-1238), Նորավանքի Ս. Կարապետ (1216-1227), Ջնջրլուի Ս. Հովհաննէս Կարապետ վանք (14-րդ դ., Մոշաղբյուր), Տոզի Ս. Հովհաննէս (1736) և այլն:

28 Արովյան քաղաքի նորակառուց Հովհաննէս Մկրտիչ եկեղեցուն Ամենայն Հայոց Կաթողիկոսը փոխանցեց Մայր Աթոռից բերված Ս. Հովհաննէս Մկրտչի մատունքը: Նախորդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հատուկ արարողությամբ Մայր Աթոռի մասանց պահարանում պահվող Ս. Հովհաննէս Մկրտչի մատունքն ամփոփող մատունքարանից հանվեց սրբի ոսկորից մի փոքր հատված և սաղմոսների ու շարականների երգեցողության ներքո,

հաննես Մկրտչի կերպարն իր ուրույն տեղն է զբաղեցնում ինչպես միջնադարյան պատկերագրության, այնպես էլ հայ գրականության մեջ:

Հովհաննես Մկրտչի Աջով խաչ-մասունքարանի խաչ կազմող թևերն ունեն եռատերև հորինվածք՝ եզերված կետագարդերով: Դրանց դաշտը հարդարված է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով (տոնաքար, մարգարիտ, սերդուիկ, մարջան, փիրուզ, քվարց, ապակի), որոնք իրենց դասավորությամբ ևս խաչերի տպավորություն են թողնում: Խաչ-թևերը մետաղե հանգույցներով ամրացված են ուղղանկյուն տապանակին՝ եզերված կիսաշրջանների սահուն շղթայով և մեկ շարք ուլունքաշարով: Տապանակի չորս անկյուններում մետաղե ամրակներով մասնատուփի հակառակ կողմին ազուցվել է ուշ վերանորոգությանը վերաբերող արձանագրությամբ թիթեղե տախտակը:

Հովհաննես Մկրտչի Աջը ներկայացված է մինչև դաստակը: Մատների հոդային հանգույցների վրայով անցնում է հյուսածո գոտի՝ հարդարված հինգ ծաղկաթերթ վարդյակներով, յուրաքանչյուրում մեկական քար՝ իրար հաջորդող փիրուզ և մարջան: Հյուսածո գոտուց վերև փոքրիկ խաչ է ազուցված, որի մակերեսը բուսանախշով է լցված, իսկ անկյուններում և խաչի միջնամասում ընդելուզված են նոնաքար և փիրուզ: Նման փոքրիկ խաչերը բնորոշ են Աջի տեսքով մասունքարաններին, որոնց դասակից հյուսածո շղթայով փոքրիկ խաչեր են կախվում (Նկ. 1 ա):

Աջի ձկույթ մատին ուղղանկյուն վահանակով մատանի է, որի ձվածիր ակնաբնում ռուբին է ազուցված: Մատանին խորհրդանշում էր հոգևոր բարձր իշխանություն: Համաձայն հայոց եկեղեցական կանոնակարգի՝ մատանին հոգևոր դասի համար ուներ աստիճանի և պատվո նշանակություն: Աջ ձկույթին մատանի կրում էին եպիսկոպոսները, իսկ մատնեմատին՝ կաթողիկոսները²⁹:

Աջի պատկերը խիստ իրապաշտական ոճով է դրվագած, արտահայտիչ են մատնահատվածները (ֆալանգները): Աջի մակերեսի ոսկու փայլն ավելի վառ է, քան ամբողջ մասունքարանի ետնախորքինը: Աջը կերտող վարպետն այդ կերպ փորձել է ընդգծել լուսաստվերը՝ ծավալայնություն հաղորդելով Աջ-պատկերին:

Ինչպես յուրօրինակ այս մասնատուփում, այնպես էլ կլիկյան մանրանկարներում ոսկու կիրառումը պատկերին հաղորդում է ռելիեֆայնություն՝ ստեղծելով դրվագման պատրանք: Ոսկե հենքի մշակման այսպիսի հնարանքի կիրառմամբ լուսավորվում է ոչ միայն մանրանկարը, այլև այն միահյուսում է զարդանախշերը («Խաչելություն», Մալաթիայի ավետարան, 1267-1268թթ., ՄՄ ձեռ. 10675, «Խաչից իջեցում», Ճաշոց, 1286թ., ՄՄ ձեռ. 979³⁰):

Հելլենիստական շրջանում ոսկին և դրանից պատրաստված իրերը ոչ միայն թանկարժեք էին, այլև սրբազան նշանակություն ունեին: Ոսկին համադրվում էր արևի հետ: Քրիստոնեությունը նույնպես սահուն կերպով

ներկայությամբ եկեղեցու բարերարի ընտանիքի, գետեղվեց նորակառույց եկեղեցու համար պատրաստված խաչ-մասունքարանի մեջ: <http://www.haynews.am/hy/1368554730>

29 Տե՛ս Հակոբյան Ն., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը 9-13-րդ դդ..., «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 10, Եր., 1981, էջ 55:

30 Տե՛ս Матенадаран, т. 1, сост. В. О. Казарян, С.С. Манукян, Москва, 1991, рис. 246, 282.

ՄՇԱԿՈՒՅԹ

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

ընդունեց ոսկու սրբազնացման ավանդույթը, որը վերահիմաստավորվելով, կանոնակարգվեց պատկերագրության մեջ: Քրիստոնեության մեջ ոսկին համադրվում է ինչպես Աստծո լույսի, այնպես էլ անմահության ընկալման հետ³¹: Չկորցնելով ոսկու իր հատկությունները վերածույլելու ընթացքում այն մնում է անապական: Եկեղեցական արարողական սպասքն ու մասնավորապես սրբերի մատուցման ամփոփող պահարանները պատրաստվում էին ոսկուց կամ ոսկեգծովում էին՝ այդպիսով խորհրդանշելով դրանց պարունակության հարատևությունն ու անաղարտությունը:

Մասնատուփը վերանորոգվել է 1670 թ., ուժեղացի վարպետ Ալիքսանի կողմից, որի մասին վկայում է մատուցարանի ետնամասում ողջ մակերեսին գետեղված, 15 տողից կազմված արձանագրությունը: Տողերն իրարից անջատված են տողագծերով և տողերի վերջավորության ազատ մնացած տարածությունները լցված են շուշան հիշեցնող ծաղկազարդով (սկ. 1բ)

ԿԵՐԱՅԻՆ ՆՈՐՈԳԵՍԻՄ ԱՅՄ ՑՈՎԱՆՆՈՒ ՍՈՐՈՑ ԿԱՐԱՊԵՏԻՆ, Ի ՑԱՍՏՈՒՄՄԵՆՊԱՆԱԿ ՍԱՅՐԱՎԱԿԱՆ ՑԱՅԱԿԱՅ, ԵՒ ՈՂՈՐՍՈՒԹԵԱՍՁ ԱՌՉԱՍԿՐԿ ԶՈՒՍՏՈՆԻՑ ՆՈՐԻՆ: ՁԱՐՈՉՈՒԹԵԱՍԲ ՆԵՐԱՒԱՎԱՐԱՊԵՏԻՆ ՏԱՐԱԲԱՅՈՑ/ ԵՒ ՊԱՅՃԱՌ ԼԻՆՈՂԵ ԱՅՍՍ ԲԱՆԻ, ՆԼՈՂՃԱԿՍ ՍԱՐԳԻՍ, ՆԼՈՂՃԱԿՍ ԱԹՏԻՄԵՆ, ՆԼՈՂՃԱԿՍ ԳՈՒԳՈՐՆ, ՆԼՈՂՃԱԿՍ ԱԿԱՐՆ, ԶԵՆՈՍՁ ՈՒՐԱՅԵՑԻՎ ՎԱՐՊԵՏ ԱԽՔԱՆԱԿԻՆ ՈՃ ԵՒ՝ ԺԹ (1670) ԹՈՒՆ, ԵՒ ՑԱՍՏԵԼԱՆՎ ԱՂՐԻՆ: Ի (20):

Հովհաննես Մկրտչի Աջով խաչ-մատուցարանի ստեղծման դարաշրջանում Կիլիկիայի ինչպես սոցիալ-տնտեսական հարաբերություններում, այնպես էլ մշակութային կյանքում նոր ու ավելի բարդ ձևեր էին հաստատվել, քան բուն Հայաստանում՝ հայկական, արևմտաեվրոպական, բյուզանդական ավանդույթների մեկտեղման պատճառով: Թեև Կիլիկյան արվեստը զարգանում էր բուն Հայաստանի նվաճումների հիմքի վրա, բայց միաժամանակ հարստանում էր տարբեր մշակույթներից փոխառյալ տարրերով, որոնք ոչ թե մեխանիկորեն էին փոխանցվում, այլ օրգանապես տարրալուծվում էին պատկերագրական համակարգի մեջ: Ուստի մատուցարան կերտող վարպետը, գործելով տեղական և օտարամուտ ավանդույթներով հարուստ միջավայրում, արտաքին ազդեցությունների ներքո փորձել է պահպանել իր ինքնուրույնությունը և ստեղծել յուրօրինակ մշակութային սինթեզ:

Եզրակացություններ

Այսպիսով, քրիստոնեության տարածման սկզբնական շրջանից էական նշանակություն ուներ մատուցների պաշտամունքը, որն արագորեն տարածվեց թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում: Քրիստոնեական մատուցների պահպանության համար ստեղծվեցին բազմաձև թանկարժեք մասնատուփեր ու տապանակներ, որոնց ձևերն ու պատկերները դարձան

31 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Ոսկին հայ միջնադարյան աշխարհընկալման համակարգում, «Հին Հայաստանի ոսկին, մ.թ.ա. III հազարամյակ- մ.թ. XIV դար», Եր., 2007, էջ 67-68:

պատկերագրության գլխավոր աղբյուր: Հայաստանում նույնպես մասունքներն ամփոփելու համար ստեղծվում են տարբեր տիպերի մասունքարաններ. տարածված էին հատկապես պահարանները, խաչերն ու աջերը:

Հայ կիրառական արվեստի մեջ կարևոր տեղ զբաղեցնող գեղարվեստական մետաղամշակությունը սերտորեն կապված էր պատկերագրության, մանրանկարչության ու հատկապես քանդակագործության հետ՝ արտացոլելով ոճական ու զարդապատկերային ընդհանուր նմանություններ: 13–14-րդ դդ. Կիլիկյան Հայաստանում ևս զարգացման բարձր աստիճանի էր հասել մետաղի գեղարվեստական մշակումը, որը, փոխազդվելով արևելյան ու արևմտյան մշակույթներից, կարողացել էր ստեղծել իր ուրույն արվեստը, որով, իր հերթին, ազդել էր հարևան երկրների մշակույթների վրա:

Կիլիկյան միջավայրում է ստեղծվել Հովհաննես Մկրտչի Աջով խաչմասունքարանը, որն իր կառուցվածքով եզակի է մասանց պահարանների մեջ. խաչի ընդհանուր ուրվապատկերի մեջ ամփոփված է մասնատուփտապանակը, որի մեջ՝ Հովհաննես Մկրտչի Աջի դրոշմազարդ պատկերը: Այս մասունքարանը հետաքրքիր է ոչ միայն իր կերտվածքի ոճական առանձնահատկություններով, իմաստաբանությամբ, կարևոր տեղեկություն պարունակող արձանագրությամբ, այլև արվեստի հոյակապ ստեղծագործություն է՝ զարդարված թանկարժեք քարերով, որոնք գունային նրբերանգների ներդաշնակ խաղ են ստեղծում:

Summary

THE CROSS-RELIQUARY WITH JOHN THE BAPTIST'S DEXTER

Astghik A. Babajanyan

The study refers to Armenian Christian relics and especially reliquaries. After legalization of Christian worship ecclesiastical architecture started to flourish with wide impetus, in which the construction of sanctuary-martyria at sites of martyrdom occupies a significant place as relics are an important aspect of the medieval Christian cultural heritage. First of all, the role of relics is important in the organization of holy space of the sanctuary which is comprehended as a monumental reliquary. Later the role of relics increased at such an extent that portable reliquaries were made to keep relics. Their forms became important source of studying the medieval iconography.

Armenian Apostolic church also adopted the tradition of keeping relics in reliquaries. The main forms of reliquaries in Armenia were rectangular boxes, cross shaped, right hand shaped.

A comprehensive research of relics and reliquaries is impossible to introduce with one report that's why the research is going to be continual. In this article I emphasize on the cult of John the Baptist in Armenia and the geography of

ՄՇԱԿՈՒՅԹ

Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

spreading of his relics, introducing a unique example of a reliquary which is kept at a special treasury of the St Etchmiadzin cathedral. It was created in Adana in the 14th century and was refurbished in 1670.

The uniqueness of this reliquary is in its conformation; the three forms of reliquaries accepted in Armenia – the casket, the cross and the right hand are concentrated in one. As we know, in the medieval period everything had to correspond to canonicity, thus allowing nearly no deviations.

The great interest of John the Baptist's Reliquary is not only of its form, symbolism, inscription with important information, but it is also a wonderful piece of art, adorned with precious gems, which create harmonic coherence of subtle color shades.